## Անշարժ գույքի վերանորոգման/բարելավման նպատակով վարկ ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկ

| | |
|---|---|
| **Հաճախորդի ինքնությունը**[i] | • Անձնագրի (կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ), առկայության դեպքում նաև սոցիալական ապահովածության քարտի բնօրինակները և պատճենները<br>• Ամուսնության վկայականի պատճե, եթե այդպիսին կա,<br>• Երեխաների ծննդյան վկայականների պատճեններ, եթե անձնագրեր չկան<br>• Հաճախորդի հետ միասին ապրող անձանց թվաքանակի մասին պաշտոնական տեղեկանք **բնակության վայրից**<br>• Ընտանիքի անդամների անձնագրերի պատճեններ<br>• Հաճախորդի՝ ՀՀ Բանկերից մեկում բացված դրամային/դոլարային հաշվի պայմանագիր |
| **Տվյալներ եկամուտների մասին** | • Եկամուտների մասին տեղեկանք գործատուի կողմից[ii]<br>• Երկրորդային եկամուտը հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում)<br>• Աշխատանքային գրքույկի և/կամ պայմանագրի, հրամանի պատճե, քարտային հաշվի քաղվածք, առկայության դեպքում<br><br>*Ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամտի դեպքում պահանջվող փաստաթղթեր*<br><br>Հիմնադիր փաստաթղթեր՝<br>• Կանոնադրություն (իրավաբանական անձի դեպքում)<br>• Տեղեկանք պետական ռեգիստրից ընկերության վերաբերյալ<br>• Բաժնետերերի ռեեստրից քաղվածք (բաժնետիրական ընկերությունների դեպքում)<br>• Պետական գրանցման վկայական<br>• ՀՎՀՀ<br>• Հաշվապահական հաշվեկշիռը՝ տվյալ պահի դրությամբ<br><br>Գործունեության վերաբերյալ փաստաթղթեր՝<br>• ՀՀ ՖՆ ՊԵԿ ներկայացված ֆինանսական հաշվետվություններ վերջին 12 ամսվա համար (Շահութահարկի հաշվարկ, ԱԱՀ հաշվարկ, Եկամտային հարկի հաշվարկ, Շրջանառության հարկի հաշվարկ և այլն),<br>• Տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ<br>• Տեղեկանք վերջին 12 ամսվա ընթացքում փաստացի ստացված եկամուտների և ծախսերի վերաբերյալ՝ ըստ ամիսների<br>• Տեղեկանք ապրանքանյութական պաշարների մնացորդի և դրանց շուկայական արժեքների վերաբերյալ<br>• Տեղեկանք հիմնական միջոցների և դրանց շուկայական արժեքների վերաբերյալ<br>• Հարկային մարմինների կողմից իրականացված ստուգման վերջին ակտ (առկայության դեպքում)<br>• Վերջին վեց ամիսների կտրվածքով կատարված գրառումներ (առկայության դեպքում)<br>• Լուսանկարներ ծավալվող գործունեության վերաբերյալ |
| **Վարկային պատմության մասին տվյալներ** | • Գործող և վերջին մեկ տարվա ընթացքում մարված բոլոր վարկային գործարքների **(ներառյալ ոսկու վարկեր, ապառիկներ, վարկային գծեր, այլ վարկեր)** մասին մանրամասն տվյալներ, ներառյալ վարկային, գրավի պայմանագրեր, վարկային հաշվից քաղվածք, մարման ժամանակացույց<br>• Վարկառուի և իր հետ Փոխկապակցված անձանց, Համավարկառուների, Երաշխավորների համաձայնությունը վարկային հարցում կատարելու վերաբերյալ |
| **Վերանորոգվող (գրավադրվող) անշարժ գույքի հետ կապված** | • Սեփականության իրավունքի գրանցման վկայական<br>• Սեփականության իրավունքի ծագման հիմքեր, անհրաժեշտության դեպքում<br>• Սեփականատերերի (ամուսնու առկայության դեպքում՝ նաև ամուսնու) անձնագրերի, ամուսնության վկայականների պատճեններ |

<table>
<tr><td>փաստաթղթեր</td><td>• ՀՀ ԿԱ կադաստրի ՊԿ կողմից տրամադրված գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանք (ներկայացվում է վարկի տրամադրման դրական որոշման դեպքում)<br>• Գույքի գնահատման հաշվետվություն<br>• Լուսանկարներ<br>• Նախահաշիվ, որտեղ մատնանշված է կատարման վերջնաժամկետը և ստորագրված է հաճախորդի կողմից</td></tr>
<tr><td colspan="2">• Այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնց անհրաժեշտությունը որոշում է Ընկերությունը:</td></tr>
</table>

[i] Համավարկառուի կողմից նվազագույնը պետք է ներկայացվի անձնագրի պատճե, սոցիալական քարտի պատճե (առկայության դեպքում), եկամուտը հիմնավորող փաստաթղթեր

[ii] Եկամուտների մասին տեղեկանքում պետք է նշվի վարկառուի/համավարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսեկան եկամտի չափը (համախառն կամ զուտ, ընդ որում զուտ եկամտի դեպքում պետք է տեղեկանքում համապատասխան նշում կատարվի): Այն դեպքում, երբ վարակռուն/համավարկառուն միևնույն ժամանակ հանդիսանում է տվյալ կազմակերպության հիմնադիրը և տնօրենը և ներկայացվում է տեղեկանք աշխատանքի վայրից, ապա այդ տեղեկանքը պետք է հավաստվի հարկային մարմիններին ներկայացվող հաշվետվությամբ: Նախընտրելի է, որպեսզի եկամուտների մասին տեղեկանքը ստորագրված լինի ոչ միայն տնօրենի, այլ նաև մեկ այլ իրավասու անձի կողմից (գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի ղեկավար և այլն):